



Համարը N 1173-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2010.09.22/45(779)
Հոդ. 1057

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 23.09.2010

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 03.09.2010
Ստորագրման ամսաթիվը 15.09.2010
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՉ ԼՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԼՈՒՅՆԱԿԱՆԱՅՄԱՆ, ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 սեպտեմբերի 2010 թվականի N 1173-Ն

ՈՉ ԼՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԼՈՒՅՆԱԿԱՆԱՅՄԱՆ, ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(վերնագիրը փոփ. 28.09.17 N 1209-Ն)

«Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝
 - 1) ոչ նյութական մշակութային արժեքների նույնականացման, փաստաթղթավորման, պահպանության և տեղեկատվության փոխանակման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.
 - 2) *(ենթակետն ուժը կորցրել է 28.09.17 N 1209-Ն)*
 - 3) *(1-ին կետը փոփ. 28.09.17 N 1209-Ն)*
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Սարգսյան

2010 թ. սեպտեմբերի 15
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 3-ի N 1173-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1. Սույն կարգով կարգավորվում են ոչ նյութական մշակութային արժեքների նույնականացման, փաստաթղթավորման, պահպանության և տեղեկատվության փոխանակման հետ կապված հարաբերությունները:
- 2. Սույն կարգի դրույթները վերաբերում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգության և անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային արժեքների պետական ցանկերում (այսուհետ՝ պետական ցանկեր) ընդգրկված՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի ոլորտի պետական լիազոր մարմնի (այսուհետ՝ պետական լիազոր մարմին) մասնագիտական խորհրդի կողմից ճանաչված ոչ նյութական մշակութային արժեքներին, որոնք ենթակա են ընդգրկվելու նշված պետական ցանկերում:

II. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄԸ

- 3. Պետական լիազոր մարմինը ոչ նյութական մշակութային արժեքների հայտնաբերման, հաշվառման և ուսումնասիրման, ինչպես նաև պետական ցանկերի տվյալների արդիականացման, ճշգրտման, անհրաժեշտ տեղեկություն տրամադրման, լրամշակման նպատակով պարբերաբար կազմակերպում է երթուղային դիտանցումներ՝ համակարգված կերպով ընդգրկելով Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի ու բնակավայրերի տարածքները:
- 4. Դիտանցումների ընթացքում բացահայտված ոչ նյութական մշակութային արժեքին վերաբերող տվյալները տեղում գրառվում, լուսանկարվում, տեսագրվում և ձայնագրվում են:
- 5. Դիտանցման ավարտից հետո հավաքված նյութերը նույնականացվում են նախկինում գրանցված նույնանուն կամ նկարագրական տվյալների համընկնում ունեցող արժեքների հետ, արձանագրվում են ինչպես պահպանված, այնպես էլ՝ կորսված բաղադրատարրերը, գրանցվում է դիտանցման պահին առկա իրավիճակը:
- 6. Պետական լիազոր մարմինը պետական ցանկերում նոր արժեք ընդգրկելու կամ նշված ցանկերից արժեք հանելու վերաբերյալ առաջարկությունները ներկայացնում է մասնագիտական խորհուրդ՝ քննարկման:
- 7. Պետական լիազոր մարմինը պետական ցանկերի կամ արդեն հաստատված ցանկերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ներկայացնում է պետական կառավարման մարմիններ և շահագրգիռ գիտական հաստատություններ՝ քննարկման:
- 8. Պետական լիազոր մարմինը պետական ցանկերի կամ արդեն հաստատված ցանկերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացվող որոշման նախագիծին կից ներկայացնում է մասնագիտական խորհրդի և շահագրգիռ կազմակերպությունների եզրակացություններն ու առաջարկությունները:
- 9. Պետական ցանկերում նոր արժեք ընդգրկելու կամ նշված ցանկերից արժեք հանելու վերաբերյալ առաջարկություն կարող են ներկայացնել նաև պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ համապատասխան հիմնավորմամբ դիմելով պետական լիազոր մարմնին:
- 10. Սույն կարգի 9-րդ կետում նշված պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք առաջարկությունները ներկայացնում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:
- 11. Պետական ցանկերից արժեքը կարող է հանվել միայն այն դեպքում, եթե այն բնական կամ արհեստական գործոնների ազդեցությամբ այլևս չի կենցաղավարում, և հնարավոր չէ վերականգնել դրա կենսունակությունը:
- 12. Պետական ցանկերում ընդգրկված արժեքների մասին տվյալները պարբերաբար (յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամ) ճշգրտվում և լրամշակվում են՝ ըստ նոր բացահայտումների, հետազոտությունների, պահպանության վիճակի և կարգավիճակի փոփոխման մասին տվյալների:
- 13. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության օբյեկտների հաշվառումը, հետազոտումն ու պահպանությունն իրականացնում է պետական լիազոր մարմինը՝ միջազգային նորմերին համապատասխան՝ համագործակցելով օտարերկրյա համապատասխան պետական և հասարակական կազմակերպությունների, գիտական, կրթական հաստատությունների, սփյուռքահայ կրոնական, մշակութային, գիտական, կրթական կազմակերպությունների ու հայրենակցական միությունների հետ:
- 14. Ոչ նյութական մշակութային արժեքների հետազոտման, հաշվառման, նույնականացման, վավերագրման վերաբերյալ նյութերը և փաստաթղթերն անժամկետ պահվում են պետական լիազոր մարմնի, ինչպես նաև գիտական, կրթական, մշակութային պետական հաստատությունների արխիվներում: Նրանց կողմից ամփոփված, թվայնացված նյութերը հրապարակվում են տեղեկատու էլեկտրոնային շտեմարաններում, կայքէջերում:

III. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

15. Ոչ նյութական մշակութային արժեքների պահպանության գործառնությունը կարող են իրականացնել ինչպես մշակութային, գիտության և կրթության ոլորտի Հայաստանի Հանրապետության պետական լիազոր մարմինները, տեղական ու տարածքային կառավարման մարմինները, այնպես էլ իրավաբանական և ֆիզիկական անձինք:

16. Պետական լիազոր մարմինը, մշակութային, գիտական, կրթական հաստատությունների ու կազմակերպությունների համաձայնությամբ, կազմում է ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության միջոցառումների ծրագրեր՝ անհրաժեշտության դեպքում ընդգրկելով համապատասխան այլ պետական մարմիններ կամ հասարակական կազմակերպություններ:

17. Ծրագրերը կազմվում են՝ հաշվի առնելով ոչ նյութական մշակութային ժառանգության յուրաքանչյուր բնագավառի առաջնահերթությունները, զարգացման հեռանկարները:

18. Հաշվի առնելով առանձին արժեքների կենսունակության նվազման միտումները՝ պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում առաջարկություն՝ դրանք ներառելու Հայաստանի Հանրապետության անհապաղ պաշտպանության կարիք ունեցող արժեքների ցանկում:

19. Պետական լիազոր մարմինը, մշակութային, գիտական, կրթական հաստատությունների հետ համատեղ, մշակում և իրականացնում է անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային արժեքների պահպանության, կենսունակության պաշտպանության միջոցառումներ:

20. Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության միջոցառումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

21. Ոչ նյութական մշակութային այն արժեքները, որոնք այլևս հնարավոր չէ բնական, սոցիալ-մշակութային միջավայրում պահպանել, դրանց վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը սահմանված կարգով անհրաժեշտ է թանգարանացնել:

IV. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

22. Ոչ նյութական մշակութային արժեքների մասին տեղեկատվության փոխանակումը և հրապարակումն իրականացվում են գիտական, կրթական, մշակութային պետական հաստատությունների կողմից՝ էլեկտրոնային շտեմարանների, կայքէջերի, գիտական, գիտաճանաչողական, հանրամատչելի գրականության հրատարակման միջոցով:

23. Տեղեկատու էլեկտրոնային շտեմարաններում ընդգրկված տարրերի վերաբերյալ տվյալները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ս որոշման N 1 հավելվածի 2-րդ կետով հաստատված չափորոշիչների համաձայն:

24. Պետական լիազոր մարմինը պետական ցանկերում ներառված տարրերի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակում է «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգություն» կայքէջում՝ <http://int-heritage.am/am/> հղումով:

25. Տեղեկատու էլեկտրոնային շտեմարանի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գտնվող հայկական ոչ նյութական մշակութային արժեքների գրանցումն ու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական ու ֆիզիկական անձանց ոչ նյութական մշակութային ժառանգության մասին հավաստի տեղեկատվությամբ ապահովումն է:

26. Տեղեկատու էլեկտրոնային շտեմարանի վարման հիմնական խնդիրներն են՝
- 1) տվյալների հավաստիության և ամբողջականության ապահովումը.
 - 2) ոչ նյութական մշակութային արժեքների պահպանության, օգտագործման, զարգացումների ու փոփոխությունների, դրանց կրողների մասին տեղեկատվության տարածումը.
 - 3) գիտական, կրթական, մշակութային պետական հաստատությունների արխիվներում և ֆիզիկական անձանց մոտ պահպանվող տեղեկատվության տրամադրումը:

(հավելվածը խմբ. 28.09.17 N 1209-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր

ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ
(հավելվածն ուժը կորցրել է 28.09.17 N 1209-Ն)